ՀՐԱՎԵՐ N S 1

21.11.2016թ.

2016թ. Նոյեմբերի 21-ին «Իրավաբենների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ԻՀԱ, պաշտոնական կայքում (www.armla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով նախատեսված ֆինանսական աուդիտ:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, Գնման առարկայի գինը, պատրաստման ժամկետը և որակի մասին տեղեկությունները:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտ
2. Հայտարարություն
3. Կազմակերպության կանոնադրություն (պատճեն),
4. Իրավաբանական անձի գրանցման վկայականը և ներդիրը (պատճեն),
5. ՀՎՀՀ-ի (պատճեն),

Մրցույթի հաղթող կճանաչվի այն Կազմակերպությունը, որը կներկայացնի ամենացածր գնով, սեղմ ժամկետներում և պահանջվող որակով Գնման առարկայի պատրաստման հայտ:

Խնդրվում է հաշվի առնել, որ ֆինանսական աուդիտի համար նախատեսված վճարումը պետք է կատարվի Եվրոպական միության օժանդակությամբ և ազատված են ԱԱՀ-ից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոհամայնքի միջև կնքված 2006 թվականի ապրիլի 4-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից և 2009թ-ի սեպտեմբերի 23-ին ընդունված 1112-Ն որոշման և նրա հավելվածի:

Հայտերը պետք է ուղարկվեն կամ ներկայացվեն ք. Երևան, Նալբանդյան 7/2 հասցեով՝ մինչև 2016թ. Դեկտեմբերի 1-ը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ԻՀԱ գնման հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով 010 580298 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են 2016թ. Դեկտեմբերի 2-ին, ժամը 16:00-ին:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով ծրագրային կայքը հետևյալ հասցեով http://iravaban.net/en/eu-project-en:

_____ _____

անուն ազգանուն ստորագրություն